



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hwugt.abovyan.kotayq@mta.gov.am

20-ը փետրվարի 2023թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՕՐԿԱ ԱՌԻԹՈՎ

1988 թվականի փետրվարի 20-ին մեկնարկեց հայ ժողովրդին մեկ գաղափարի շուրջ համախմբող Արցախյան շարժումը՝ Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս գալու, Խորհրդային Հայաստանին միանալու միահամուռ որոշմամբ և սեփական երկրում ազատ ապրելու պահանջով: Արցախյան շարժման մեկնարկի օրը հռչակվեց որպես Արցախի վերածննդի օր, որն ամեն տարի Արցախի Հանրապետությունում նշվում է որպես պետական, ազգային տոն: Մեր հայրենակիցների արյամբ սրբագործված Արցախը հայ ժողովրդի հաղթական անցյալն է, փորձություններով լի ներկան և ապագայի հուսալի հանգրվանը. հենց այս մտքով առաջնորդվելով՝ այսօր, առավել քան երբևէ, մենք պետք է արթուն պահենք 1988թ.-ի ոգին ու միասնականությունը, տեր կանգնենք մեր երկրին և ստեղծված հումանիտար աղետի պայմաններում լինենք արցախահայության կողքին:

Սիրելի՛ արցախցիներ.

Ձեզ բաժին հասած դժվարություններն անչափելի են. ապրում եք շուրջ երկու տարի զավթված հայրենիքի կարոտով, հարազատների կորստի ցավով, իսկ այսօր նաև հումանիտար աղետի պայմաններում: Միևնույն ժամանակ, անչափելի են այն մեծ ուժն ու հաստատակամությունը, որը դրսևորում եք դուք և ի հեճուկս շրջափակման հետևանքով ստեղծված բարդությունների՝ շարունակում եք մնալ տոկուն ու հավատարիմ 35 տարի առաջ սկիզբ առած Արցախյան շարժման գաղափարախոսությանը:

Սիրելի՛ արցախցիներ և աշխարհասփյուռ հայություն.

Արցախյան շարժման 35-րդ տարեդարձի առիթով ի սրտե շնորհավորում եմ բոլորիս և մաղթում 1988-ի համախմբվածություն, ուժ և համբերություն արցախահայությանը, խաղաղություն և անվտանգություն Արցախ աշխարհին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ